ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱՁԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

ԴԱՍ 3

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԴՐԱՁԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

«Հեռաուսուցման դասընթացների մշակում Արդարադատության ակադեմիայի համար» ծրագիրը ֆինանսավորվել է ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից և իրականացվել է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից՝ Արդարադատության ակադեմիայի հետ գործընկերությամբ: Սույն նյութում արտացոլված են հեղինակների տեսակետները, մեկնաբանությունները և եզրակացությունները, որոնք կարող են չհամընկնել ԱՄՆ Պետքարտուղարության տեսակետների հետ:

ԴԱՍ 3

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս դասը կազմված է հետևյալ 4 բաղադրիչներից.
մոտիվացնող ներածական տեսանյութ,
դասի տեսական նյութ,
բառարան և
ինքնաստուգիչ հարցեր:
Բոլոր բաղադրիչների յուրացման համար
Ձեզ հարկավոր է 4 ժամ:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն այս ձեռնարկում:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ

Տեսանյութն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

Ուշադրությամբ կարդացեք դասի տեսական մասը՝ օգտվելով բառարանից, և այն յուրացնելուց հետո միայն պատասխանեք ինքնաստուգիչ հարցերին:
Այս աշխատանքների համար անհրաժեշտ է մոտ 210 րոպե:

Կոռուպցիոն հանցագործությունների քննության առումով առանցքային նշանակություն ունի հանցագործության սուբյեկտի հստակ որոշումը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի համաձայն՝ ինչպես ցանկացած, այնպես էլ կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտ կարող է լինել միմիայն ֆիզիկական, մեղսունակ, քրեական պատասխանատվության սահմանված տարիքի հասած անձը: Կոռուպցիոն հանցագործությունների առանձին տեսակների պարագայում՝ օրենսդիրն առաջ է քաշում նաև հատուկ սուբյեկտի չափանիշին համապատասխանելու հարցը:

Ինչ վերաբերում է իրավաբանական անձին, ապա գործող քրեական օրենսգրքի համաձայն վերջիններս կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտ չեն հանդիսանում: 2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգիրքը, սակայն, նախատեսում է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորություն:

ՀՀ նոր քրեական օրենսգրքում առանձին բաժնով կարգավորվում է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը, որը վերաբերելի է նաև կոռուպցիոն վարքագիծ դրսևորած իրավաբանական անձին:

Սա կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտին առնչվող կարևոր օրենսդրական փոփոխություն է, ուստի անպայման մտապահեք այն:

ՀՀ նոր քրեական օրենսգրքում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության նախատեսումը բխում է Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի 18-րդ հոդվածի պահանջներից, որը սահմանում է՝

«1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ իրավաբանական անձինք պատասխանատվություն կրեն ակտիվ կաշառակերության, ազդեցությունը չարաշահելու և փողերի լվացման հանցագործությունների համար, որոնք կատարվել են նրանց օգտին՝ անհատապես կամ որպես իրավաբանական անձի մարմնի անդամ գործող ֆիզիկական անձի կողմից, որոնք իրավաբանական անձը ներկայացնելու լիազորության կամ իրավաբանական անձի անունից որոշումներ կայացնելու լիազորության կամ իրավաբանական անձի շրջանակներում հսկողություն իրականացնելու լիազորության վրա հիմնված ղեկավար պաշտոն է զբաղեցնում այդ իրավաբանական անձի շրջանակներում, ինչպես նաև այդ ֆիզիկական անձին վերոհիշյալ հանցագործություններում որպես օժանդակող կամ դրդող ներգրավելու համար:

2. Բացի առաջին կետում նշված դեպքերից՝ յուրաքանչյուր Կողմ պետք է ընդունի անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ իրավաբանական

անձը պատասխանատվություն կրի, երբ 1-ին կետում նշված ֆիզիկական անձի հսկողության կամ վերահսկողության բացակայությունը հանգեցրել է այդ իրավաբանական անձի օգտին 1-ին կետում նշված հանցագործությունների կատարման այն ֆիզիկական անձի կողմից, որը գտնվում է առաջինի ենթակայության տակ:

3. 1-ին և 2-րդ կետերում նշված իրավաբանական անձի պատասխանատվությունը չպետք է բացառի այն անձանց քրեական հետապնդումը, ովքեր հանդիսանում են 1-ին կետով սահմանված հանցագործությունները կատարողներ, դրդողներ կամ օժանդակողներ» (1):

Իրավաբանական անձի հնարավոր քրեական պատասխանատվությանն անդրադարձ կատարվել է նաև Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայով (2), որի 26-րդ հոդվածը նախատեսում է կոռուպցիոն հանցագործությունների համար իրավաբանական անձանց վարչական, քաղաքացիական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու պահանջը՝ չբացառելով նշված հանցանքները կատարած ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվությունը: Հիշյալ կոնվենցիան առավել կարևորում է ոչ թե այն, որ իրավաբանական անձինք ենթարկվեն քրեական պատասխանատվության, այլ որ իրավաբանական անձանց նկատմամբ ապահովվի արդյունավետ, համաչափ և զսպող ներգործություն ունեցող քրեական կամ ոչ քրեական պատժամիջոցների, ներառյալ՝ դրամական պատժամիջոցների կիրառումը:

Ուշադրություն դարձրեք իրավաբանական անձանց պատասխանատվությանը վերաբերող նորմի ուժի մեջ մտնելու ժամկետներին:

Այսպիսով, ՀՀ նոր քրեական օրենսգրքով արդեն նախատեսվել են իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը սահմանող դրույթներ: Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ դրանք ուժի մեջ են մտնելու միայն 2023 թ.-ի հունվարի 1-ից, հետևաբար, մինչ այդ ՀՀ-ում կոռուպցիոն հանցագործության համար պատասխանատվության կարող է ենթարկվել միմիայն ֆիզիկական անձը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքում տեղ գտած կոռուպցիոն հանցագործությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտների հետևյալ խմբերը՝

- հատուկ սուբյեկտ հանդիսացող պաշտոնատար անձ կամ հանրային ծառայող (օրինակ՝ կաշառք ստանալու հանցակազմում),
- հատուկ սուբյեկտ հանդիսացող այլ անձ (օրինակ՝ ապօրինի հարստացման հանցակազմում՝ պաշտոնատար անձի հետ փոխկապակցված, հայտարարագիր տալու պարտականություն ունեցող անձը),
- ընդհանուր սուբյեկտ՝ 16 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձ (օրինակ՝ կաշառք տալու հանցակազմում):

Նախքան այս հատվածն ընթերցելը, փորձեք հիշել, թե կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտների քանի խումբ գիտեք, ապա շարունակեք կարդալ դասը և ստուգեք ինքներդ ձեզ:

Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ հատուկ սուբյեկտի պահանջը կարող է վերաբերելի լինել ինչպես պետական կառույցներում որոշակի կարգավիճակ ունեցող անձանց, օրինակ՝ պաշտոնատար անձին կամ հանրային ծառայողին, այնպես էլ մասնավոր ոլորտում նմանատիպ գործառույթներ իրականացնողներին, օրինակ՝ թե՛ գործող քրեական օրենսգրքով, թե՛ 2021 թ.-ի քրեական օրենսգրքով մասնավոր ոլորտում/ առևտրային կաշառքի սուբյեկտ կարող են լինել առևտրային կազմակերպության ծառայողը, արբիտրը, փաստաբանը և այլն:

Կոռուպցիոն հանցագործությունների պարագայում առավել հետաքրքրություն է ներկայացնում հենց հանրային ոլորտում ներգրավված՝ հատուկ սուբյեկտ հանդիսացող անձը:

Ըստ Ձեզ՝ ինչո՞ւ է առավել հետաքրքրություն ներկայացնում հենց հանրային ոլորտում ներգրավված հատուկ սուբյեկտ հանդիսացող անձը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածը տալիս է պաշտոնատար անձի հասկացությունը, սահմանելով, որ պետական ծառայութ-

յան դեմ ուղղված հանցագործությունների նկարագրման ժամանակ պաշտոնատար անձինք են համարվում՝

1 մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք.

2 պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև ՀՀ զինված ուժերում, ՀՀ այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

Կաշառակերության համար պատասխանատվություն սահմանող դրույթների կտրվածքով՝ պաշտոնատար անձինք են նաև՝

1 օտարերկրյա պետության՝ տվյալ պետության ներպետական իրավունքին համապատասխան՝ պետական պաշտոնյայի գործառույթներ իրականացնող անձինք, ինչպես նաև օտարերկրյա պետության օրենսդիր մարմնի կամ վարչական լիազորություններ իրականացնող որևէ ներկայացուցչական մարմնի անդամները.

2 միջազգային կամ վերազգային հանրային կազմակերպության կամ մարմնի պաշտոնյաները կամ այդ կազմակերպության կամ մարմնի կանոնակարգերով նախատեսված դեպքերում պայմանագրերով աշխատողները կամ այլ անձինք, որոնք կատարում են նման պաշտոնյաների կամ աշխատողների կողմից իրականացվող գործառույթներին համապատասխանող գործառույթներ.

3 միջազգային կամ վերազգային կազմակերպության, խորհրդարանական վեհաժողովի կամ նման գործառույթ իրականացնող այլ մարմնի անդամները.

4 միջազգային դատարանի, որի իրավասությունն ընդունել է ՀՀ-ն, դատական գործառույթներ իրականացնող անդամները կամ պաշտոնյաները.

5 օտարերկրյա պետությունների դատարանների երդվյալ ատենակալները:

Պաշտոնատար անձի ներկայացված ձևակերպումը, հիմնականում, արտացոլում է Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի ԵԽ կոնվենցիայի 2-րդ հոդվա-

ծում տեղ գտած պաշտոնատար անձի հասկացությունը: Վերջինս ենթադրում է, որ «պաշտոնատար անձ» է.

1. նշանակովի կամ ընտրովի ցանկացած անձ, որը մշտական կամ ժամանակավոր հիմունքներով, վարձատրությամբ կամ առանց աշխատանքի վարձատրության որևէ պաշտոն է զբաղեցնում պետության օրենսդիր, գործադիր, վարչական կամ դատական մարմնում՝ անկախ այդ անձի պաշտոնի մակարդակից.
2. պետական գործառույթ իրականացնող ցանկացած այլ անձ, այդ թվում՝ պետական գերատեսչության կամ պետական ձեռնարկության համար, կամ որևէ հանրային ծառայություն մատուցող, ինչպես դա սահմանված է պետության ներքին օրենսդրությամբ, և ինչպես դա կիրառվում է այդ պետության իրավական կարգավորման համապատասխան բնագավառում.
3. որևէ այլ անձ, որը պետության ներքին օրենսդրությամբ սահմանվում է որպես «պաշտոնատար անձ»:

Միաժամանակ, նշված կոնվենցիան սահմանում է, որ առանձին դեպքերում՝ կոռուպցիայի կանխարգելման նպատակով, «պաշտոնատար անձ»-ը կարող է նշանակել ցանկացած անձ, որն իրականացնում է որևէ պետական գործառույթ կամ մատուցում է որևէ հանրային ծառայություն, ինչպես դա սահմանված է պետության ներքին օրենսդրությամբ, և ինչպես դա կիրառվում է տվյալ պետության իրավական կարգավորման համապատասխան բնագավառում:

Ինչ վերաբերում է օտարերկրյա պաշտոնատար անձին, ապա նշված կոնվենցիայի համաձայն՝ «օտարերկրյա պաշտոնատար անձ» է՝ նշանակովի կամ ընտրովի ցանկացած անձ, որը որևէ պաշտոն է զբաղեցնում օտարերկրյա պետության օրենսդիր, գործադիր, վարչական կամ դատական մարմնում, և ցանկացած անձ, որը որևէ պետական գործառույթ է կատարում օտարերկրյա պետության համար, այդ թվում՝ պետական գերատեսչության կամ պետական ձեռնարկության համար: «Միջազգային կազմակերպության պաշտոնատար անձ» նշանակում է՝ միջազգային քաղաքացիական ծառայող կամ ցանկացած անձ, որն այդպիսի կազմակերպության կողմից լիազորված է՝ գործելու նրա անունից:

Կոնվենցիայում տեղ գտած պաշտոնատար անձի հասկացության վերլուծությունից հետևում է, որ նշված հասկացությունը բավականին լայն է և ներառում է ինչպես պաշտոնատար անձանց, այնպես էլ պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողներին:

Նկատի ունենալով այն, որ ՀՀ գործող քրեական օրենսգիրքը պաշտոնատար անձի հասկացությունն ավելի նեղ է սահմանում և ներառում է միայն այն անձանց, ովքեր մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ իրականացնում են իշխանության ներկայացուցչի, կամ էլ՝ կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառույթներ, օրենսդրի կողմից առանձին կանոնակարգվել են նաև պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին ապօրինի վարձատրություն տալու կամ վերջինիս կողմից ապօրինի վարձատրություն ստանալու դեպքերը (3): Այնուհանդերձ, նույնիսկ այդ պարագայում, գործող քրեական օրենսգրքում տեղ գտած ձևակերպումները հաճախ խնդրահարույց են՝ կոռուպցիոն հանցանք կատարած անձին պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս:

Մինչև հաջորդ պարբերությունն ընթերցելը փորձեք բնութագրել իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձին:

Հիմնական հարցերից մեկը, որը ծագում է, վերաբերում է նրան, թե ով է հանդիսանում իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող:

Իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձինք են համարվում իրենցից ծառայական կախվածություն չունեցող, իրենց ծառայական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ կարգադրիչ լիազորություններ ունեցող անձինք: Ընդ որում, իշխանության ներկայացուցիչ կարող են համարվել նաև այն անձինք, ովքեր իշխանության ներկայացուցչի գործառույթներ են իրականացնում ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ, երբ պաշտոնապես, օրենքով սահմանված կարգով ներգ-

ռավվում են հանցավորության դեմ պայքարին կամ վերահսկիչ գործունեության իրականացմանը և օժտվում են համապատասխան լիազորություններով (4)։ Թեև իշխանության ներկայացուցչի գործառույթների իրականացումը ենթադրում է, որ վերջինիս պահանջների կատարումը պարտադիր է իրենց ենթակայության տակ չգտնվող անձանց կողմից, այնուհանդերձ, այդ իշխանությունն անսահման չէ, այլ առանձին դեպքերում կարող է վերաբերելի լինել միայն կոնկրետ ոլորտում գործառույթների իրականացմանը։ Օրինակ՝ մաքսային տեսուչների պահանջները քաղաքացիների կողմից ենթակա են պարտադիր կատարման միայն մաքսային իրավահարաբերությունների շրջանակներում (5)։

Պաշտոնատար անձի հասկացությունը բացահայտելիս հետաքրքրություն է ներկայացնում նաև այն, թե ինչ պետք է հասկանալ «մշտապես», «ժամանակավորապես» և «առանձին լիազորությամբ» եզրույթների բովանդակության ներքո։ Հասկանալի է, որ ժողովրդավարական պետությունում դժվար է մատնանշել որևէ պաշտոն, որը ենթադրում է անընդմեջ, անընդհատ պաշտոնավարում՝ մինչև կյանքի վերջը։ Հետևաբար, «մշտապես» եզրույթի ներքո պետք է հասկանալ կոնկրետ հաստիքում, օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածում օրինական հիմունքներով պաշտոնավարումը։

«Ժամանակավորապես» պաշտոնավարումը ենթադրում է որոշակի ժամկետով (ժամանակավորապես) ստեղծված կառույցներում, ինչպես նաև մշտական հիմունքներով գործող կառույցի/մարմնի ներսում պաշտոնատար անձի գործառույթների ժամանակավորապես իրականացումը։

Առանձին լիազորությամբ պաշտոնատար անձի գործառույթների իրականացումը կարող է իրականացվել հատուկ իրավական ակտի հիման վրա, օրինակ՝ դեսպան նշանակելիս (6)։

Կազմակերպական-տնօրինչական գործառույթներ իրականացնող են համարվում այն պետական ծառայողները, ովքեր ղեկավարում են իրենց ենթակայության տակ գտնվող ծառայողների գործունեությունը (7)։

Վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պետական ծառայողներն այն անձինք են, ովքեր օժտված են գույքի, նյութական արժեքների տնօրին-

ման, կառավարման լիազորություններով, մասնավորապես, գույքի, նյութական արժեքների պահպանության, վերամշակման, նյութական արժեքների իրացման նկատմամբ հսկողության սահմանման, դրամական միջոցների ստացման, հանձնման և այլ գործառույթներով (8):

Զուտ մասնագիտական գործառույթներ իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողները կարո՞ղ են հանդիսանալ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ: Հիմնավորեք Ձեր պատասխանը, ապա շարունակեք ընթերցել հաջորդ հատվածները և ստուգեք Ձեր պատասխանի իսկությունը:

Գործնականում խնդիրներ են ծագում առանձին կատեգորիայի անձանց՝ կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտ դիտելու առումով: Օրինակ, վիճահարույց է բժշկին, դասախոսին, ուսուցչին կոռուպցիոն հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը, հատկապես, եթե խոսքը վերաբերում է ոչ պետական կառույցներում աշխատողներին:

Դրա վկայությունը ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներն են Հ. Սահակյանի (9), Ա. Այվազյանի, Ք.Ջամալյանի և Է. Ջամալյանի գործերով (10):

Մասնավորապես, Հ. Սահակյանի գործով ՀՀ Վճռաբեկ դատարանը փաստել է.

Ուշադրություն դարձրեք ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշմանը կոռուպցիոն հանցագործության սուբյեկտի առնչությամբ:

«...պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ դիտելու համար էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե արդյոք նրանք օժտված են իրավական նշանակություն ունեցող, իրավահարաբերություններ առաջացնող, դադարեցնող կամ փոփոխող գործողություններ կատարելու լիազորությամբ: Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ է

այն պետական ծառայողը, ով իրավունք ունի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության անունից պաշտոնական փաստաթուղթ տրամադրել քաղաքացիներին և դրանով կարգավորել նրանց վարքագիծը: Զուտ մասնագիտական գործառույթներ իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողները պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ չեն հանդիսանում: Սակայն, եթե նշված անձինք օժտված են նաև կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական լիազորություններով, ապա, այդ լիազորություններն իրականացնելիս հանդիսանում են պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ...» (11):

Հետևաբար՝ եթե գործ ունենք բժշկի, դասախոսի, ուսուցչի հետ, ովքեր պարզապես իրականացնում են իրենց մասնագիտական գործառույթները, ապա նրանց հնարավոր չէ քրեական պատասխանատվության ենթարկել կոռուպցիոն հանցանքի համար, ինչը հաստատել է Վճռաբեկ դատարանը նաև Ա. Այվազյանի, Ք. Ջամալյանի և Է. Ջամալյանի գործով, սահմանելով, որ բժշկական գործունեության ոլորտի աշխատողը (բուժաշխատողը) զուտ իր մասնագիտական գործառույթներն իրականացնելիս պաշտոնատար անձի կարգավիճակ չունի: Սակայն բժշկական գործունեության ոլորտում մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական և վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք կարող են քննարկվող կարգավիճակն ունենալ: Օրինակ, բժշկական գործունեության ոլորտում կազմակերպական-տնօրինչական գործառույթները ներառում են պետական մարմնի, պետական կամ տեղական հիմնարկի (դրա կառուցվածքային ստորաբաժանման) աշխատանքային կոլեկտիվի կամ իր ծառայողական ենթակայության ներքո գտնվող անձանց ղեկավարումը, կադրային կազմի ձևավորման կամ աշխատանքային գործառույթների, ծառայություն անցնելու կարգի սահմանումը, խրախուսման և պարգևատրման միջոցների, կարգապահական տույժերի կիրառումը, ինչպես նաև իրավական նշանակություն ունեցող կամ իրավական հետևանքներ առաջացնող որոշումների ընդունումը (օրինակ՝ անձի աշխատունակության, առողջական վիճակի վերաբերյալ փաստաթուղթ տալը, փորձագիտական հանձնաժողովի

կամ զորակոչային հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու հետ կապված լիազորություններ իրականացնելը)։ Ընդ որում, կոռուպցիոն հանցակազմի սուբյեկտի հատկանիշի առկայությունը փաստելու համար բավարար կարող է լինել ոչ միայն մշտապես կամ ժամանակավորապես, այլ նաև հատուկ լիազորությամբ կազմակերպատնօրինչական լիազորությունների իրականացումը, այդ թվում՝ իրավական նշանակություն ունեցող կամ իրավական հետևանքներ առաջացնող կոնկրետ որոշման ընդունման կամ դրա ընդունմանը մասնակցելու առանձին դեպքը։

Մասնավորապես, Ք. Ջամալյանի գործով Վճռաբեկ դատարանը փաստել է, որ Ք. Ջամալյանը, լինելով ոչ պետական հիվանդանոցի բժիշկ, հանդիսացել է պաշտոնատար անձ, քանի որ եղել է ձմեռային զորակոչի ընթացքում զինապարտների բժշկական հետազոտում, փորձաքննություն և բուժում իրականացնող բժշկական կազմակերպություններում ձևավորված, ՀՀ Առողջապահության նախարարի հրամանով ձևավորված հանձնաժողովի կազմում ընդգրկված թեկնածու բժիշկ-մասնագետ, հետևաբար, նրա գործառույթները եղել են պաշտոնատար անձի գործառույթներ։

Տեսության մեջ և պրակտիկայում՝ կոռուպցիոն հանցագործության սուբյեկտին վերաբերող վեճերին վերջ դնելու նպատակով՝ 2021 թ.-ի մայիս 5-ին ընդունված նոր քրեական օրենսգիրքը սահմանել է պաշտոնատար անձի հասկացությունը՝ դրա մեջ ներառելով նաև պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողին։

Համաձայն նշված օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի՝ պաշտոնատար անձ է՝

1. հանրային ծառայող, հանրային պաշտոն զբաղեցնող անձ, պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմնի, պետության կամ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կամ հիմնարկի անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձը,
2. այլ պետության հանրային իշխանության ոլորտում, օրենսդիր, գործադիր կամ դատական իշխանության ոլորտում մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ պաշտոն զբաղեցնող կամ ծառայություն իրա-

կանացնող կամ այդ կառույցի անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձը կամ իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձը,

3 միջազգային կամ վերպետական հանրային կազմակերպությունում կամ կառույցում մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ պաշտոն զբաղեցնող կամ ծառայություն իրականացնող կամ նշված կազմակերպության կամ կառույցի անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձը կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձը,

4 միջազգային կամ վերպետական միջազգային կազմակերպության ներկայացուցչական մարմնի կամ նման գործառույթ իրականացնող կառույցի ներկայացուցիչը,

5 միջազգային դատարանում մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ պաշտոն զբաղեցնող կամ ծառայություն իրականացնող կամ դատարանի անունից հանդես գալու լիազորություն ունեցող անձը կամ դրա անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձը,

6 այլ պետության կամ միջազգային դատարանի երդվյալ ատենակալը:

ՀՀ նոր քրեական օրենսգիրքը հստակեցնում է նաև առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողի հասկացությունը, սահմանելով, որ առևտրային կամ այլ կազմակերպության ծառայող է այն անձը, որն իրավասու է հանդես գալու առևտրային կազմակերպության կամ պետական կամ համայնքային չհամարվող ոչ առևտրային կազմակերպության կամ հիմնարկի անունից կամ դրանց անունից մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ իրականացնում է կարգադրիչ, այլ կառավարչական կամ վերահսկողական գործառույթ:

Ծանոթացեք հասկացությանը:

Կոռուպցիոն հանցագործությունների սուբյեկտի հարցը քննարկելիս՝ առանձին դեպքերում վեճեր են ծագում այն հարցերի շուրջ, թե ինչպես պետք է որակվի արարքը և ինչպես պետք է լուծվի անձի քրեական պատասխանատվության հարցը, եթե անձը սխալմամբ կամ իր կամ այլ անձի ապօրինի վարքագծի արդյունքում է ձեռք բերել հատուկ սուբյեկտի, օրինակ՝ պաշտոնատար անձի կարգավիճակ և այդ կարգավիճակում հանցանքներ է կատարել:

2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգիրքը պատասխան է տվել նաև այդ հարցերին, 20-րդ հոդվածում սահմանելով, որ եթե՝

Ծանոթացեք օրենսդրական կարևոր նորամուծությանը:

անձն իր կամ այլ անձի ապօրինի արարքի հետևանքով է անհիմն հատուկ սուբյեկտի կարգավիճակ ստացել և կատարել է հատուկ սուբյեկտով հանցանքը, ապա ենթակա է քրեական պատասխանատվության հատուկ սուբյեկտով հանցագործության համար, բացառությամբ սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերի: Հետևաբար, եթե անձը մոլորության արդյունքում կարողացել է պաշտոն զբաղեցնել և այդ կարգավիճակում կաշառք է ստացել, ապա պատասխան պետք է տա ոչ թե խարդախության, այլ կաշառք ստանալու համար:

Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության հատուկ սուբյեկտով հանցագործության համար, եթե հատուկ սուբյեկտի հատկանիշներով օժտված է եղել նախքան հանցանքի կատարումը, սակայն հանցանքի կատարման պահին այդ հատկանիշները բացակայել են:

2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածը նաև կանոնակարգում է այն իրավիճակները, երբ հատուկ սուբյեկտ ենթադրող հանցանքն իրականացվում է այդպիսի հատկանիշներ չունեցող անձի կողմից: Մասնավորապես, սահմանվում է հետևյալը.

1 Հանցագործության հատուկ սուբյեկտ չհամարվող անձը, որը մասնակցել է հատուկ սուբյեկտով հանցանքի կատարմանը, տվյալ հանցագործության համար կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել միայն որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող:

2 Եթե հատուկ սուբյեկտ չհամարվող անձը հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը կատարել է հատուկ սուբյեկտի դրդմամբ կամ նրա հետ համատեղ, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության տվյալ հանցագործությանն օժանդակելու համար, եթե նրա արարքում այլ հանցակազմ չկա:

3 Եթե հատուկ սուբյեկտ չհամարվող անձը կատարել է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը հատուկ սուբյեկտի դրդմամբ կամ նրա հետ համատեղ, և նրա արարքում առկա է այլ հանցակազմ, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության միայն հատուկ սուբյեկտով հանցագործությանն օժանդակելու համար, եթե հատուկ սուբյեկտով հանցագործության համար ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցագործության համար, որի հատկանիշներն առկա են հատուկ սուբյեկտ չհանդիսացող անձի արարքում:

4 Եթե հատուկ սուբյեկտ չհամարվող անձը կատարել է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը հատուկ սուբյեկտի դրդմամբ կամ նրա հետ համատեղ, և նրա արարքում առկա է այլ հանցակազմ, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության միայն այն հանցագործության համար, որի հատկանիշներն առկա են նրա արարքում, եթե դրա համար ավելի խիստ պատիժ է նախատեսված:

5 Եթե հատուկ սուբյեկտ չհամարվող անձը կատարել է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը հատուկ սուբյեկտի դրդմամբ կամ նրա հետ համատեղ, և նրա արարքում առկա է այլ հատուկ սուբյեկտով հանցագործության հանցակազմ, որի սուբյեկտ է ինքը, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության միայն որպես այդ հանցագործության կատարող:

6 Եթե քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածում նշված հանցագործության հատուկ սուբյեկտ չհամարվող անձը կատարել է տվյալ հանցագործութ-

յան օբյեկտիվ կողմն իր նախաձեռնությամբ, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված այն հանցագործության համար, որի հատկանիշներն առկա են նրա արարքում:

Ներկայացված դրույթներից հետևում է, որ եթե պաշտոնատար անձ կամ հանրային ծառայող չհանդիսացող անձը, սեփական նախաձեռնությամբ, առանց նշված անձանց հետ պայմանավորվածության, որևէ մեկից ապօրինի վարձատրություն ստանա՝ պաշտոնատար անձի լիազորությունների մեջ մտնող որևէ գործողություն անելու մատնանշմամբ, ապա արարքը պետք է որակվի ոչ թե կաշառք ստանալ, այլ խարդախություն:

Մինչդեռ, եթե պարզվի, որ նշված անձը գործել է պաշտոնատար անձի հետ պայմանավորվածության շրջանակներում, և գումարը պետք է, օրինակ, փոխանցեր վերջինիս, ապա, կախված նրանից, թե արդյոք միաժամանակ իրականացրել է նաև դրդչություն թե ոչ, պատասխանատվության կենթարկվի կաշառք ստանալուն օժանդակելու կամ այդ հանցանքը կազմակերպելու համար:

ՀՂՈՒՄՆԵՐ

Հղումները նախատեսված են Ձեզ հետաքրքրող նյութերի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար

1 Կոռուպցիայի մասին Քրեական իրավունքի կոնվենցիա, ԵԽ, 27.01.1999, http://www.irtek.am/views/act.aspx?aid=40642 *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

2 Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա, 31.10.2003, https://www.arlis.am/documentview.aspx?docID=48021 *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

3 GRECO third evaluation report on Armenia on incriminations, 2010, https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c2af7 *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

4, 6 Պետական ծառայության դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների որակման և քննության մեթոդիկայի առանձնահատկությունները: Գիտագործնական մեկնաբանություններ: Եր.: «Տիգրան Մեծ», 2015, էջ 11, 13 https://www.ccc.am/files/pashtoneakan.pdf *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

5 Баранчикова М.В. Квалификация получения взятки представителем власти. Вестник Тюменского института повышения квалификации сотрудников МВД России. 2015. № 1 (4), էջ 120, https://mvd.ru/upload/site151/doc/arhiv/Vestnik_TIPK_MVD14_2015.pdf *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

7, 8, 9, 11 Հ.Խ. Սահակյանի վերաբերյալ քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2013 թ. հոկտեմբերի 18-ի թիվ ԼԴ/0207/01/12 որոշում, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=30962247438195501 *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

10 Ա. Այվազյանի, Ք. Ջամալյանի, Է. Ջամալյանի վերաբերյալ քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2018 թ. դեկտեմբերի 24-ի թիվ ԵԷԴ/0040/01/16 որոշում, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=15481123719137775 *(վերջին անգամ դիտվել է 26.01.2022թ.)*

ԲԱՌԱՐԱՆ

Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՈՒԲՅԵԿՏ — Հանցանք կատարած այն անձն է, որը, բացի ընդհանուր սուբյեկտի հատկանիշներից, օժտված է նաև քրեական օրենսգրքի Հատուկ մասով սահմանված, սուբյեկտին ներկայացվող լրացուցիչ հատկանիշներով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ — Ցանկացած իրավաբանական անձ է, որը նման կարգավիճակ ունի կիրառելի ներպետական իրավունքի համաձայն՝ բացառությամբ պետությունների կամ այլ պետական լիազորություններ իրականացնող մարմինների և միջազգային հանրային կազմակերպությունների:

ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅՈՒՆ — Ներառում է ինչպես ակտիվ (կաշառք տալ), այնպես էլ պասիվ կաշառակերությունը (կաշառք ստանալ), այդ թվում՝ կաշառք ստանալու/տալու միջնորդությունը: